

«20» հունվար 2020թ.

No 170 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 333-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալների միջև աշխատանքները բաշխելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 1427-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 333-Ա հրամանի հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հավելված

ՀՀ առողջապահության նախարարի
2019 թվականի փետրվարի 11-ի թիվ 333-Ա հրամանի

ԲԱՇԽՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼՆԵՐ ԱՐՏՅՈՄ ՍՄԲԱՏՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆԻ, ԼԵՆԱ
ՆԱՆՈՒՇՅԱՆԻ ԵՎ ՇԱՎԱՐՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ**

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանն իրականացնում է՝

1) արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների (բացառությամբ ստոմատոլոգիական և հոգեբուժական ծառայությունների) կազմակերպման աշխատանքների համակարգումը՝ նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության միջոցով:

2) դատաբժշկական, դատահոգեբուժական, ախտաբանաանատոմիական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների կազմակերպման աշխատանքների համակարգումը՝ նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության, «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով,

3) մոր և մանկան առողջության պահպանման կազմակերպման աշխատանքների համակարգումը՝ նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության միջոցով,

4) նախազորակոչային և զորակոչային գործընթացի առողջապահական բաղադրիչի կազմակերպման աշխատանքների համակարգումը՝ նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության միջոցով,

5) առողջապահական համակարգի՝ նախարարության միջոցով իրականացվող ֆինանսավորման աշխատանքների, ներառյալ՝ նախարարության բյուջետային գործընթացի, պետական պատվերի տեղադրման գործընթացի, պայմանագրային գումարների տեղաբաշխման և վերաբաշխման, նախարարության ենթակայության կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության համարակցումը՝ նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության և պետական առողջապահական գործակալության միջոցով,

6) զորահավաքային և արտակարգ իրավիճակների նախապատրաստվածության կազմակերպման աշխատանքների համակարգումը՝ նախարարության արտակարգ իրավիճակների և զորահավաքային նախապատրաստության բաժնի միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Անահիտ Ավանեսյանն իրականացնում է՝

1) առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների լիցենզավորման և գովազդի թույլտվությունների տրամադրման

աշխատանքների համակարգումը՝ նախարարության լիցենզավորման գործակալության միջոցով,

2) նախարարության՝ արտաքին հարաբերությունների ոլորտում իրականացվող միջպետական, ներառյալ ԱՊՀ երկրների և Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակում իրականացվող աշխատանքների համակարգումը՝ նախարարության միջազգային հարաբերությունների վարչության միջոցով,

3) առողջապահության քաղաքականության, ստվերային շրջանառության դեմ պայքարի, առողջապահության ոլորտի օրենսդրության մշակման և կատարելագործման աշխատանքների համակարգումը՝ նախարարության իրավաբանական վարչության միջոցով,

4) կոռուպցիայի դեմ պայքարի աշխատանքների համակարգումը՝ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող ստորաբաժանում հանդիսացող նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության, ինչպես նաև մոր և մանկան առողջության պահպանման վարչության, իրավաբանական վարչության, քաղաքացիների բողոքների և դիմումների արագ արձագանքման բաժնի, ոլորտային իրավասու այլ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով,

5) դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում իրականացվող աշխատանքների համակարգումը՝ նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցով,

6) առողջապահական տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության ոլորտի աշխատանքների համակարգումը՝ նախարարության պետական առողջապահական գործակալության, «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տեղեկատվական-վերլուծական կենտրոնի միջոցով,

7) մարդասիրական օգնության ստացման և բաշխման աշխատանքների համակարգումը՝ ՀՀ ԱՆ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշանն իրականացնում է՝

1) ՄԱԿ-ի և դրա կառույցների, ԱՄՆ Միջազգային զարգացման ընկերության և Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրերի շրջանակում իրականացվող աշխատանքների համակարգումը՝ նախարարության միջազգային հարաբերությունների վարչության և ոլորտային իրավասու կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով,

2) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և տուբերկուլոզի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համակարգումը՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերը համակարգող խմբի, «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն», «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով,

3) հանրային առողջության ապահովման և հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքների համակարգումը՝ նախարարության հանրային առողջության բաժնի, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով,

4) կադրերի և մարդկային ներուժի զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը՝ նախարարության անձնակազմի կառավարման վարչության, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության և «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով,

5) Հայաստանի Հանրապետությունում առողջության համապարփակ ապահովագրության ներդրմանն ուղղված աշխատանքների համակարգումը՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության, ՀՀ ԱՆ պետական առողջապահական գործակալության և ՀՀ առողջապահության նախարարի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի միջոցով:

4. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Շավարշ Գրիգորյանն իրականացնում է՝

1) առողջապահական կազմակերպությունների արդիականացման և ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգումը ոլորտային իրավասու կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով,

2) առողջապահական կազմակերպություններում բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների օպտիմալացման ծրագրերի, բժշկական կենտրոնների կառուցման, վերանորոգման աշխատանքների իրականացման համակարգում «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի միջոցով,

3) Համաշխարհային բանկի, ինչպես նաև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող առողջապահական վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը,

4) առողջապահական ոլորտի պետական գնումների մրցույթների կենտրոնացման աշխատանքների համակարգում,

5) առողջապահական կազմակերպությունների ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգումը ոլորտային իրավասու կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով,

6) ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների կազմակերպման աշխատանքների համակարգումը՝ նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության միջոցով:

7) Առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպություններում հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման աշխատանքների համակարգում:»:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ